**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1**
**№ ԳՀԾՁԲ-21-20/1-3 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ**

ք. Երևան 15-ը ապրիլի 2021թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Ս. Սահակյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Պատվիրատու, մի կողմից և «Մեժլում Գրիգորյան» Ա/Ձ-ն՝ այսուհետև՝ Կատարող, մյուս կողմից, հիմք ընդունելով 12.02.2021թ. կնքված № ԳՀԾՁԲ-21-20/1-3 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.15 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

1.1 Սույն Համաձայնագրով Կատարողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով Պատվիրատուին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետև՝ Ստացող) մատուցել Պայմանագրի N 1 Հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ծառայություն (այսուհետև՝ Ծառայություն), իսկ Պատվիրատուն (Ստացողը) պարտավորվում է ընդունել այդ Ծառայությունը և վճարել դրա համար:

## 2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Կատարողի կողմից մատուցվելիք Ծառայության առավելագույն գինը /գումարը/ ներկայացված է Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող Հավելված N 1-ում: Համաձայնագրի առավելագույն գինը կազմում է **2 000 000 (երկու միլիոն) ՀՀ դրամ,** որը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Պատվիրատուն մատուցված Ծառայության դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 4.2 կետին համապատասխան, եռամսյակներում առկա միջոցների հաշվին, բայց ոչ ուշ, քան 10.12.2021թ. (Հավելված N 2):

## 3. Այլ պայմաններ

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ծառայության մատուցման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 2 թերթից, հայերեն լեզվով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն Համաձայնագրի № 1,2 Հավելվածները բաղկացած են 1 թերթից և հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ ինժեներական զորքերի վարչությունը:

## 4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն<br>ք. Երևան Բագրևանդի 5<br>ՀՀ ՖՆ աշխատակազմի<br>գործառնական վարչություն<br>Հ/Հ 900011144079<br>ՀՎՀՀ 02522157<br>ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ<br><br>Ս. ՍԱՀԱԿՅԱՆ | «Մեժլում Գրիգորյան» Ա/Ձ<br>ՀՀ, ք. Աբովյան, 4-րդ միկրոշրջան,<br>11շ., բն. 20<br>"Կոնվերս Բանկ" ՓԲԸ<br>Հ/Հ 19300754413600<br>ՀՎՀՀ 43078315<br><br>Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ |

Հավելված N 1
№ ԳՀԾՁԲ-21-20/1-3 գնման պայմանագրի
N 1 համաձայնագրի

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/հ | Ծառայությունների անվանումը | Չ/մ | Քանակը | Առավելագույն գինը /գումարը/ (ՀՀ դրամ) | Ծառայությունների մատուցումը 2021թ. 2-րդ, 3-րդ, 4-րդ եռամսյակներում, բայց ոչ ուշ քան 01.12.2021թ. |
|---|---|---|---|---|---|
| 1 | ՈՉ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ (Հատուկ ինժեներական տեխնիկայի վերանորոգում տեղերում վերանորոգման մեկնող խմբերի կողմից) | դրամ | 1 | 2000000 | ըստ հայտերի |

**Ծանոթություն՝** բացվածքը ներառված է **պայմանագրի հավելված 1-ում:**

Հավելված N 2
№ ԳՀԾՁԲ-21-20/1-3 գնման պայմանագրի
N 1 համաձայնագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Հ/հ | Ծառայությունների անվանումը | CPV կոդը | Նախատեսվում է ֆինանսավորել 2021թ. ըստ եռամսյակների, բայց ոչ ուշ, քան 10.12.2021թ., ընդ որում | | |
|---|---|---|---|---|---|
| | | | 2-րդ եռամսյակ | 3-րդ եռամսյակ | 4-րդ եռամսյակ |
| 1 | ՈՉ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ (Հատուկ ինժեներական տեխնիկայի վերանորոգում տեղերում վերանորոգման մեկնող խմբերի կողմից) | 50531100/505 | 400000 | 1200000 | 2000000 |

** Վճարման ենթակա գումարը ներկայացված է ամբողջական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Ս. ՍԱՀԱԿՅԱՆ

**ԿԱՏԱՐՈՂ**

«Մեժլում Գրիգորյան» Ա/Ձ

Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ